քանզի խանն որ 'ի ներքոյ վանաց Բեթղեհէմի, յափշտակեալ այլազգի գիւղականաց տարեալ էին զայն իջեւանատեղի հասարակաց, թէպէտեւ Գրիգոր Պատրիարք յառաջագոյն բազում ներութեամբ և տառապանօք ազատեալ էր զայն 'ի ձեռաց նոցա, և չլինեալ 'ի վերայ նորա սենեակս 'ի բնակութիւն ուխտաւորաց, նորոգեալ էր նաեւ զաւերեալ և խախտեալ սենեակս 'ի վերայ երկաթի դրան վանաց: Եւ այս ամենայն շինութիւնք և նորոգութիւնք լեալ էին յայնժամ Կայսերական հրովարտակաւ եւ դատաստանական գրովք եւ մանրամասն քննութեամբ դատաւորին և այլազգեաց՝ (1621)· որպէս գրեցաք 'ի նախընթաց գլուխդ, և լեալ էր պատուէր և հրաման չնեղել այլազգեաց զՊատրիարքն և զմիաբանութիւնն, վասն այնր շինուածոց: Սակայն յանցանել ժամանակաց և 'ի փոփոխիլ դատաւորաց եւ կուսակալաց, 'ի մոռացօնս լինէին գրեանքն· և չհամարեալ ինչ զնոսա, պէսպէս հնարիւք և խարեյութեամբ հանէին զայլ հրաման, և նոքօք բռնանային 'ի վերայ վանաց, և պահանջէին զգումարս դրամոց· և երբեմն նոյն իսկ կուսակալն Դամասկոսի, Բդեշխ և դատաւորն Երուսաղէմի, եւ այլք· ոմանք թէ առանց հրամանի շինեալ էք, ոմանք աւելի քան զհրամայեալն· այլք զայլ իմն սնոտի պատճառս յօդելով պահանջէին զինչս և տագնապէին զՊատրիարքն և զմիաբանս մինչեւ հոգիս լինել ապաստան: Չկարացեալ զդէմ ունել բռնութեանց և հանդուրժել տառապանաց՝ խորհէին թողուլ և լքանել միանգամայն զշինուածս և զվանօրայս և մեկնիլ 'ի քաղաքէն, թերեւս շահիլ զկեանս իւրեանց: Սակայն կարի ծանր և դժուարին թուեցաւ այս խորհուրդ Գրիգորի Պատրիարքի, զի չէր դիւրին այնքան դառն աշխատութեամբ, քրտամբք վաստակօք և մեծամեծ ծախիւք զարդիւնս դարաւոր իրաւանց· 'ի միում աւուր մատնել 'ի ձեռս անողոք թըշնամեաց, որոց բերանաբաց սպասեալ կային: Զմտաւ ածէր Գրիգոր չկորուսանել զքանամեայ վաստակս, և լինիլ առակ նշաւակի առաջի օտարաց· այլ տեսանէր զինքն մերկացեալ 'ի գոյից, և տառապանքն զօրացեալ առաւել քան զկար իւր: Սակայն 'ի բաց եթող առ ժամն զալետանջ ծուփս խորհրդոց իւրոց, չօքաւ առ դատաւոր քա-